— «Գուշակողի» մօտ ենք գնում, — պատասխանեց մեր առաջնորդներից մէկը:

— «Գուշակողը» ահա այնտեղ է կենում: — Նա ցոյց տուեց մի առանձնացած վրան, որի մէջ դեռ լոյս էր երեւում, եւ որը բաւական հեռու էր բանակից:

«Գուշակողը» այնքան անհրաժեշտ մարդ էր, որ գիշեր ու ցերեկ այցելուներ միշտ անպակաս էին լինում նրա վրանից, այդ պատճառով մեր տարաժամ այցելութիւնը չզարմացրեց գիշերապահներին: Խաւարի միջից նրանք չնկատեցին, թէ մենք ինչ տեսակ մարդիկ ենք:

Մենք գտանք «գուշակողին» միայնակ իր վրանում. նա դեռ չէր քնած, լապտերի առջեւ նստած, գիրք էր կարդում: Երբ լսեց մեր ձիաների ոտնաձայնը, գիրքը ցած դրեց եւ դուրս եկաւ:

— Բարի՞ լինի, — հարցրեց նա:

— Ամենակարողի ողորմութեամբ բարի է, — ասաց Ասլանը, — ձեր գուշակութիւնները լսելու ենք եկել:

Նա կանգնած էր վրանի մուտքի առջեւ, լապտերից դուրս ցոլացած լոյսի մէջ նկարւում էր որպէս մի սպիտակ արձան: Ձիւնի պէս ճերմակ մազերը թափոել էին ուսերի վրայ եւ, միախառնուելով նոյնպէս ճերմակ մօրուքի հետ, կազմում էին մի սպիտակ շրջանակ, որի խտութեան միջից դուրս էր նայում նրա ազդու դէմքը: Երեսի կաշին, երեւի մշտական պահեցողութիւնից, դեղնել, դալկացել, մագաղաթի գոյն էր ստացել: Նրա հագուստը բաղկացած էր մէկ կտորից միայն. դա մի սպիտակ շապիկ էր, որ հայոց ժամի շապիկների նման իջնում էր մինչեւ նրա բոբիկ ոտները:

Ինքը լոյսի կողմում կանգնած լինելով, իսկ մենք խաւարի կողմում, ամենեւին ճանաչել չկարողացաւ, թէ մենք ինչ երկրի մարդիկ ենք, կամ ի՞նչ ազգից. եւ այդ պէտք էլ չէր նրան գիտենալ, նրա վրանի մուտքը բոլորի համար բաց էր:

— Համեցէք, ցած իջէք, — ասաց նա ճգնաւորի ձայնով, — բայց ձեր ձիաների հոգսը ինքներդ պէտք է տանէք, ես այստեղ բոլորովին միայնակ եմ, ոչ ոք չունեմ:

Մեր առաջնորդները ամէն պատրաստութիւններ ունէին իրնց հետ: Երբ ցած իջանք, իսկոյն խուրջիններից հանեցին երկաթեայ բըխովները (ոտնակապ), նրանցով կապեցին ձիաների ոտները, բըխովները կողպեցին բանալիներով, յետոյ նոյնպէս երկաթեայ երկար մեխերը ցցելով գետնի մէջ, նրանց գլխին ամրացրած օղակներից կապեցին ձիաների երասանակները,